



ԱՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԱԿԱՆ ԵՐԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆՔ

ԼԵԽՈՆ ԵՐԵՔՍԱՍԱՆԵՐՈՐ ԴԻ

ԿԵՆԱՑ ԵՒ ԵՕԹԱՄԵԱՅ ՔԱՀԱՆԱՑԱԳԵՏԵՄԵԱՅ ՎՐԱՅ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Հայրենիք, ընտանիք և ծնունդ թովակիմ Փէջիի. — 2. իր առաջին ուսմունքն՝ 3. Առանող աստուահարանորեան և եկեղեցական Ակադեմիային.



ՈԳԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՌՎՄԱՅԷՆ ՚ի
Նէապոլիս զնացող ճանա
պարհորդն՝ իւր աջ կողմն
Վելլեղրիէ քիչ մանդին կը
տեսնէ զբարբինէց գիւքը գիւղաքաղաք
հովվմէական իշխանութեան, լերի.
նեան ըրանց գեղածիծաղ գրից վրայ։
Այս փոքր քաղաքու՝ շինեալ ՚ի Վու-
կեանց, ուրիշ քաղաքաց նման՝ քան-
դեցաւ ՚ի տիրապետող Հռովմայեցուց։
Միջին դարու մէջ Ալտոպրանտինի ըն-
տանեաց աւատական կալուած մ'եղաւ,
և կղեմէս լի եղբօրորդին՝ ծիրանաւորն
Պետրոս սոյն այս ընտանիքէն, վելա-
րաւորաց ընդարձակ վանք մը հաստա-
տեց. որոյ մօտ իր ազգականաց համար
ալ գեղեցիկ պալատ մը բարձրացուց,
զոր և վերջին ստացողն նուիրեց թա-
գաւորող Քահանայապետին։ Քարբի-
նէց գրեթէ հինգ հազար բնակիչ ունի.
երկու հինգ եկեղեցի ունի, որոց միոյն
մէջ կը պահուի Յուլիսոս Հռովմայեցուցն
(Giulio Romano) գեղեցիկ պատկեր մը։

Մինչ մեր օրերն յիշառակաց արժա-
նի եղական գէաք մը չէ հանդիպեր՝ ո-
րով և իւր անունն անծանօթ է պատ-
մութեան. բայց արդ այս գիւղաքաղա-
քիս որդոց մին՝ Սրբոյն Պետրոսի գա-
հոյն վրայ կը բազմի, և Հռովմէական
փոքրիկն Քարբինէց կրնայ պարծիլ իւ-
տալիոյ միւս մեծամեծ քաղաքաց հա-
ւասար. Հոս՝ 1810 Մարտ 2ին՝ ծնաւ-
կոմն Յովակիմ Վինկենտ Փէջի, որ

այսօր կոչուի Լիսն Երեքտասահներորդ։
Այս նախասահմանեալ մանկան ծը-
նընեան օրերն՝ մեր արդի օրերուն նը-
ման շատ թշուառ էին։ Թէպէտ գաղ-
ղիական յեղափոխութիւնն դադրեր էր,
բայց գեռ ևս մոլոր վարդապետու-
թիւնք մեծապէս կը վնասէին զուղա-
դաւան ժողովուրզ։ Պոնաբարդ՝ որ
նախ ողջունուեր էր իրը վերանորոգիչ
և պաշտպան կրօնից, ոտն առ ոտն ըս-
կըսաւ իր անշափ հպարտութեան և փա-
ռասիրութեան ցոյցերն տալ, և իւր զի-
նուորաց յեւրոպա թափած արեամբ
ստացած յաղթութեամբք և փառօք
ուսուցեալ պնդագլխութեամբ կ'ուղէր
զիկեղեցին և իւր վեհափառ Գլուխը
ծառայեցընել իր անիրաւ պահանջա-
նաց գործադրութեան։

Նոյն ատեններն ալ Քահանայապե-
տին ժամանակաւոր իշխանութեան վը-
րայ կը խօսուէր, և Պիոս 3, որ այնափ
քալից և հեղ գտնուեցաւ՝ շնորհելով
Նախուէնի փափագածներն որչափ որ
ժողուց իւր նիշնմտանքն և հոգւոց բա-
րին, անդրգուելի կերպով պաշտպանեց
Սրբազն Քահուն իրաւունքն, պատաս-
խանելով թէ և ես պահապան լինելով
։ Պետրոսի ստացուածոց, բացարձա-
կապէս չեմ կընար հրաժարիլ այն իրա-
ւունքն՝ որ այսպիսի ծանր պայման մը
կը դնէ իմ վրաս ու Հռոմ քաղաքէն յա-
փշտակուեցաւ օրինաւոր իշխանն, և
քիչ վերջը կաթողիկէ աշխարհն սար-

սափով լսեց՝ որ թիսուսի Քրիստոսի փոխանորդն իբր ոճրագործ զինուորաց ձեռք բանտարկեցաւ ՚ի Սաւոնա : Սյոյն այս ժամանակ ծնած նորահաս մանուկն զրեթէ դար մը վերջը եռապսակեալ զլխօք ինքն իսկ նոյնալիսի պատճառաւ պիտի բանտարկուի : Այսպէս ահա պատմութիւնը կը յիշեցնէ մեղի Եկեղեցւոյ զէմ յարուցեալ նոր հալածանքներն և Քահանայապետաց ցուցած անվեհեր արիութիւնն ՚ի պաշտպանութիւն իրենց սրբազն իրաւանց, որք և առանց ընդհատութեան շղթայաշար մէկզմէկ կը յաջորդեն, մինչդեռ զիրենք հալածողք կը գահավիժին և իրենց գործն ալ կ'աներենութեանայ :

Փէջի ընտանիքն՝ ուսկից ելաւ լևոն ժդ, ընիկ Աննացի է, բայց հալածեցաւ Մետիշեանց կողմանակցութիւն ընելուն համար, և ընդ պաշտպանութեամբ կղեմայ ի՞ պատաստանեցաւ և հաստատուեցաւ Եկեղեցւոյ գաւառաց մէջ ՚ի Քարբինէքս : Երեք դար բնակեցաւ անդ այս ազնուական աղջատուիմն՝ միշտ հռովմայ և մերձակայ քաղաքաց առաքինի և զիտուն անձնիքը ընծայելով: Բենեզիկ առս ժդի ժամանակ՝ Քերդինանտոս Փէջի անուանի փաստարանն յոյժ սիրելի էր Քահանայապետին: Ճիշդ մի և նոյն ատեն կը համբաւէր նաև Յովհան Մկրտիչ Փէջի անունն՝ որ քիչ մը ատեն Անանի ընդհանուր աթոռակալ եղաւ, բայց յետոյ կղեմէս ժդ Քարձրաց զինքը յասակնան եպիսկոպոսութեան, զոր և չկրցաւ վայելել կանխամահ լինելով: Քիչ մը վերջը կը ծաղկէր Յովսէփի Փէջի նշանաւոր զիտունականն:

Ապագայ Քահանայապետին հայրն կը կոչուէր կոմն Լուգովիկոս, իսկ մայրն Աննա Քրոսփիրի: Անանի եպիսկոպոսը Յովսէփի Թողի, որ մեծ քարեկամ էր ընտանեաց, իրեն կնքահայրն եղաւ. և մկրտութեան ժամանակ անուանեցին զինքը Յովսէփիմ-Վինկենտիոս-Ռափայ յէլ-Լուգովիկոս: Իւր քարեպաշտուհի տիկին մայրն որ շատ չերթեանդ էր առ Սուրբն Վինկենտ Ֆէրէրեան, միշտ այս

անուամբ կը կոչէր զինքը, և հետեաբար ամէն ծանօթ անձինք՝ մանկութեան և պատանեկութեան ատեն այսպէս կը կոչէին: Բայց 1830ին մօրը մահուընէ քանի մը տարի վերջը, գարձեալ ինքն իւր առաջին Յովսէփիմ անունն սկսաւ գործածել, զոր այլ ևս շթողուց: Այս ազնուական ընտանեաց սրբազնագոյն և սիրելի աւանդութիւնն եղեր էր միշտ նիմ հաւատաք և Քրիստոնէական առաքինի կեանք, ուստի և իւր ծնողն զինքը ըն յառաքինութիւն յաստուածպաշտութիւն կրթելու համար՝ ամենայն փոյթ և խնամք տարան: Եւ երբ իր ուսումնական ընթացքն պիտի սկսէր՝ Պիոս է իրեն յաղթական մտաւ ՚ի Հըռովմ, և ամենայն ինչ կարգաւորեալ վիճակ մ'ըստացաւ, և մանաւանդ պատանեկաց դաստիարակութիւնն :

Բ. - 1847ին աշնան, պատանեակն Փէջի՝ իր Յովսէփ եղբօրը հետ, որ իրմէ երկու տարի մեծ էր, ծնողաց հետ մէկտեղ Հովովմ գնացին: հոն իրենց Ընտոն հօրեղբօր քով քանի մ'ամիս կեցան: Յովորդ տարիին կոմնն Փէջի ուղելով հաստատուն և ապահով դաստիարակութիւն մը տալի իրաւուց որդւոց, որոցց օր Վիժերպօյի Յիսուսեանց ծաղկեալ գըպրոցը գնէ: Այս գպրոցին մէջ վեց տարի կեցաւ Յովսէփիմ, և մինչև գիմնազիոնի չորրորդ դասու ուսմունքն աւարտեց:

Այն Երիտասարդ հասակին մէջ իսկ մեծ սրամութիւն և ուսմանց յաջողակութիւն և սէր ունէր. բայց մոտաւոր վարժից հետ ՚ի միասին սիրտն ալ կը վարժէր ՚ի համանգս յերմեռանդութեան: Նոյն ատենի գպրոցի վերատեսուքը Հայրն Ուպալտինի և Ճիշաննուի, առաքինութեան հայելի կը կոչէին զինքը, 1824ին աղեաց սաստիկ բորբոքում մը կրեց, որ զինքը գրեթէ մահուան գուռը հաստոց: բայց իրեն հօր տեղ ծառայող մեծաւորաց խնամքով թէպէտնախիկին առողջութիւնն ըստացաւ, բայց միշտ յարատե խանգարեալ հետք մը թողուցիր վրան այս հիւանդանութիւն: Քերականական ընթացքն աւարտելով չ. Լէոնարդոս Ճիշ-

պալտիկի հետ սկսաւ գեղեցիկ զպրութեանց ընթացքն, որուն և շատ սիրելի եղաւ իր յառաջադիմութեամբք և ընտիր վարուք։ Այն ասեն երիտասարդն Փէջի սկսաւ գեղեցիկին ճաշակն առնուլ, և մեծ ջանք ըրաւ անսխալ և դարդարուն ոճով լատիներէն գրել, որ և ցայսօր իր ամենէն մեծ զարդն և ճարտարութիւնն է։ Դեռ տասուերկու տարեկան թիսուսեանց գաւառական Մեծաւորին վրայ, որ նոյն ատեն վիդէքրպօյի դպրոցին այցելութեան եկեր էր, գեղեցիկ վերտառութիւն մ'ըրաւ։

1824ին սաստիկ վշտացաւ իր սիրեցեալ մօրը մահուան վրայ. Անոն կոմս սուհին հիւանդանալով՝ Հոռմ բերին որպէս զի աւելի ուշադիր ինամքը ընեն. բայց հիւանդութիւնն այսու հանդերձ չմեղմացաւ, այլ մանաւանդ ծանր կերպարանք մ'առաւ. այն ատեն բարեպաշտ տիկինն ուզեց վերջին անդամ մ'ալ տեսնել իր որդիքն. Յովսէփ և Վինկենտիոս Վիդէքրպօյէն վազեցին իր մահուան անկողնոյն քով, լսեցին իր վերջին խօսքերը և այն սիրելի անձինքը ըիստոնէավայել մահուան ներկայ գլունուեցան։ Այս ձախող գէպքէն վերջը՝ Յովսէփ երեց որդին ուզեց թիսուսեանց կրօնքը մանել. յիրաւի նոյն տարին կը թօնաւորեցաւ։ Այրիացեալ կոմսն Փէջի իւր կրտսեր որդին այլ ևս վիդէքրպօշըրկեց, այլ թօղուց զինքն իր հօրեգոր քով՝ ի Հոռմ, ֆափագելով որ այն մայրաքաղքին մէջ շարունակէ ուսման ընթացքը։

Լևն ժի ֆահանայապետն տարի մ'առաջ Պիոս Է յաջորդելով, Հոռմ մէական դպրոցը թիսուսեանց վերադարձուց, որը 1825ին բայցին զայն, քիչ ատենկուան մէջ հազար հինգ հարիւր աշակերտ ունեցան, Փէջի ալ օգտուելով՝ ի դասախոսութեանց դպրոցին և մեծ ջանքով անդ յաճախելով, ճարտարախօսութեան և փիլիսոփայութեան երրորդ տարուան ընթացքն աւարտեց։ Մեծամեծ և անուանի ուսուցիչներ ալ ունեցաւ. Հ. Անտոնիոս Ֆէրրարի փիլիսոփայութիւն առընդունելով վրայի մին առ

ջեանի և ֆարաֆա չափական և բնական գիտութիւններն ուսուցին։

Այս ուսմանց մէջ երիտասարդն Փէջի շատ յառաջադիմեց։ Ճարտարախօսութեան դպրոցական տարւոյն մէջ սաստիկ սէր ծգելով լատին ընտիր հեղինակաց վրայ, դպրոցին Մեծ Սրահին մէջ բովանդակ դպրոցականաց առջեւ լատիներէն ճառ խօսեցաւ. « Բաղդատութիւն ընդ մէջ հեթանոս և քրիստոնեայ Հոռմայ » վերնագրով. Որուն մէջ շատ տեղ կ'ակնարկէր նաև Պիոս Է նորանոր յաղթանակներն Մի ևնոյն տարւոյն վերջերը ցըցուց իր յաջորդական միանալուն նաև ի չափական մասին. և քննութեան ժամանակ իրեն նորհուած վեց ժամուան մէջ հարիւր քան առղով և գեղեցիկ լատիներէնով նկարագրեց բաղտասարայ ընթերիքը. և այս կերպով տաղաչափութեան արձակ զրութեան և յոնարենի առաջին մրցանակն առաւ։ Հոռմվէական դպրոցին 1828ին պարգևաբաշխութեանտագիրցուցակին մէջ կը տեսնենք որ Փէջի բնագիտութեան, բնաբանութեան ու չափաբերութեան առաջին մրցանակին ստացեր է։ Փիլիսոփայութեան ընթացքն աւարտելով Ա. Իգնատիոս ժամուն մէջ տեղի ունենալիք հասարակաց վիճաբանութեան ինքն ալ մասնակցեցաւ. Նիւթըն էր Ընդհանուր փիլիսոփայութեան ընթացքն աւարտելով Ա. Իգնատիոս առաջարկութիւնք։ Այս գժուար գործոյն երիտասարդական թափով և աշխուժիւ կը պարապէր. բայց ափսոս որ Մայիս ամսոյն մէջ հիւանդացաւ, և առողջանալուն վերջն ալ չկրցաւ զարձեալ պարապիլ այսպիսի ծանր գործոյ։

Հայրն Փրանկիսկոս Մանէրա՝ վերատեսուչ ուսմանց՝ ուզեց մասնաւոր յիշատակով մը վարձատրել այս երիտասարդ աշակերտին ջանքն և աշխատանքն, և միանդամայն լեցնել այն պակասը զոր չկրցաւ շահիլ հիւանդութեան պատճառաւ։

Աչ միայն ուսուցիչք այլ և աշակերտակից կը զարմանային իր հանճարոյն և գիտութեան վրայ, Անոնցմէ մին առ

իմբագիրն Քրիստոնէական Քաղաքա-
կանութեան (Civiltà Cattolica) այս-
պէս կը գրէր. « Կը վկայեմ որ Փէշչի
Վիդերպյօշն սկսեալ միշտ սրամիտ և
պարկեցա երիտասարդ մ'է : Նոյն զըպ-
րոցին մէջ ես ալ գտնուելով՝ ամէն ան-
գամ որ զինքը կը տեսնէի՝ կարծես թէ
նոր ոգի և հանճար մը կը ստանայի : Ի
Հոռմ ուսմանց ընթացքին ժամանակ
ոչ զուարձութեան, ոչ խաղի, ոչ ընկե-
րութեան և ոչ իսկ խօսակցութեան
կը զբաղէր. ամենայն ինչ կը գտնէր իր
գրասերդանին վրայ : Ժամուերկու կամ
տասուիրէք տարուան՝ լատիներէն շատ
աղէկ կը գրէր թէ արձակ և թէ շափա-
կոն, իր հասակէն վեր յաջողակու-
թեամբ » :

Փէշչի սրտին մէջ ջերմեռանդութիւն
ալ խորին կերպով արմատացեր էր. և
այդ պիսի ջերմեռանդութեամբ անցուց
յորելինի սրբազն տարին որ թէ զու-
սուցիչս և թէ զաշակերտակիցս մեծա-
պէս զարմացուց : Լիոն ժբ երր մայր
եկեղեցնաց կ'այցելէր՝ Փէշչի շատ կա-
խորդէր իր հետոց ետևէն երթալ, և
սիրաը զզմամբ և սուրբ եռանդեամբ
կը լեցուէր՝ երր կը տեսնէր որ այն ջեր-
մեռանդն Քահանայապետը շատ ան-
գամ բոկոտն կը մանէր յեկեղեցին զըլ-
ջացեալ և բարեպաշտ խուռն ամբոխին
առջւ : Այս տարւոց մէջ երր բոլոր աշա-
կերաք 'ի միասին Ս. Գետրոս այցելու-
թեան գնացին ներողութիւն շահելու
համար, Փէշչի աշակերտակցաց նուիրա-
կութեան մը հետ մինչև Քահանայա-
պետին քով գնաց . և ինքն աշակեր-
տակցաց կողմանէ ուղղեց առ Քահա-
նայապետն քանի մը խոսքեր :
Այս պատուէս վերջը Փէշչի սրտին մէջ
կրկնապատկեցաւ սէր և յարգանք առ
Փիխանորդն Ցիսուսի Քրիստոսի :

Բոլոր նախասահմանեալ հոգւոց նը-
ման՝ մեր երիտասարդ ուսանողն ալ
շատ ջերմեռանդ էր առ Ս. Կոյսն Յար-
դանօք և այլ և այլ ջերմեռանդական
գործերով կը պատուէր զնա : Միայն
գէպք մը լիշենք որ շատ լաւ կրնայ բա-
ցայստել բասծուս : Փիլիտափայութեան

ընթացքին մէջ աշնան արձակուրդի
ժամանակ, 'ի Քարբինէ գո իւր հայրե-
նի առունը վերադարձաւ, և հոն ամէն
օրեայ շրջագնացութեանց ժամանակ՝
մինչև Աւետիման սրբավայրը կ'երթար:
Եւ վասն զի շատ կը սիրէր զՊ. Կոյսն,
ուղեց հոն տեղի հրաշագործ պատկե-
րին պատմութիւնը և եկեղեցւոյն հաս-
տասութիւնը քիննել : Յետոյ բոլոր իր
գատած ծանօթութիւնքը լատիներէն
մակադրով մը յայանեց . ասով ալ գոհ
շեղաւ, այլ ճարպիկութեամբ մարմա-
րեայ տախտակ մը ձեռք ձգեց և սկսաւ
իր ձեռքով այն մակագիրը քանդակել
մարմարիոնին վրայ : Եւ յետ անլուր դը-
ժուարութեանց՝ վերջապէս գործն ա-
ւարտեց . և մինչև հիմա ալ այն եկեղե-
ցւոյն դրան վրայ կը կարդացուի այն
մակագիրն, զոր լեռն ձգ թէ գրեց և
թէ քանդակեց :

Գ. - Աստուած մեծ բաներու նախա-
սահմաննելով զգէչչի, իրեն սրտին մէջ
շատ կանուխ վառեց կղերական ոգին,
և շուտով զգաց իր կողումն յեկեղեցա-
կան վիճակ, և առանց վայրկեան մ'իսկ
կորսնցնելու հաւատարմութեամբ և ե-
ռանդեամբ հետևեցաւ և մտիկ ըրաւ
այն ներքին ազդեցութեան : Ուստի
նոյն Հռովմէական Գալրոցին մէջ աս-
տուածաբանութեան ընթացքն սկսաւ՝
ձեռնառութեամբ հոչակաւոր ուսուց-
չաց, որոց մի քանին արգարեն արժանի
են յիշատակութեան . Յովհաննէս Փէր-
րոնէ, Փրանկիկոս Մանէրա, Միքայէլ
Ծէքքինէլլի և Փրանկիխկոս Փադրիչի,
որ և իր խորին ծերութեան մէջ տեսաւ
իւր աշակերտին ամենամեծ փառքն և
բարձրութիւնն : Փէշչի մոգին Կորո-
փութիւնն և ուսման սէրն՝ ամէն տարի
երթալով կ'առաւելուր . և այսպիսի մե-
ծահամբաւ . ուսուցիչներէ մեծ օգուտ
քաղեց : Իւր աստուածաբանական ըն-
թացքին առաջին տարուան համար Դը-
պրոցին տարեգիրք մեծ գովեստով կը
խօսին :

Մինչդեռ Փէշչի այսափ գովեստիք
կը շարուանակէր իր սրբազն ուսմանց
ընթացքն՝ յանձնեցին իրեն գերմանա-

կան գլորոցին աշակերտաց փիլիսոփա-
յութիւն կրինելու պաշտօնն . և այս ա-
հա յայտնի ապացոյց մ'է՝ այլոցիր գի-
տութեան վրայ ունեցած մեծ համար-
ման . այս նոր պաշտօնն իրեն շատ օդ-
տակար եղաւ . և ամէն փորձառուք ալ
գիտեն թէ որչափ մեծ օդուտ է գիտ-
ցածն ուրիշին կրինել , և օրէօր սկսաւ
միտքն աւելի կորովի թափ մ'առնուլ .
Փէրրոնէի խորհրդով աստուած արա-
նութեան մէջ յառաջադէմ աշակերտաց
համար ճեմարան մը հաստատուեցաւ ,
ուր պարապոյ օրեր կը հակոնառէին
վիճաբանական ոճ ստանալու համար :
Եւ որպէս զի այս կրթութիւնն աւելի օդ-
տակար մինի՞ երկու անգամ ալ Դպրո-
ցին մեծ Սրահին մէջ նոյն բանը հասա-
րակաց առնկ ըրբին : Չորս երիտասարդ
աշակերտք քրիստոսական կրօնից հա-
կառակորդք կը ճեւանային , ամէն ջանք
պիտի ընէին այս որոշեալքն այլ և այլ
պատճառարանութեամբ պաշտպանել
լուտերականաց , յանսենեանց , կեսա-
րեանց և բանականաց վարդապետու-
թիւնը . իսկ հինգերորդ մ'ալ քրիստո-
նէական ուղղագրաւան վարդապետու-
թիւնը պիտի պաշտպանէր իրենց ա-
ռարկութեանց դէմ : Արդ յայտնի կը
տեսնուի որ այս հինգերորդին գործը
ամենէն գժուարն էր , վասն զի մասաց
մեծ կորովութիւն , լուսափայլ պատ-
ճառաբանութիւն և ճարաւարիսու
և յանկուցիչ լեզու պէտք է . և ահա այս
մասը ֆէշչիի յանձնեցին :

1832ին՝ գեռ քսաներկու տարուան ,
ֆէշչի աստուած արանութեան վարդա-
պետական պսակն ընդունեցաւ : Եւ այս
աստենէս սկսեալ՝ մեծ ջերմեռանդու-
թիւն մը զդալով առ հայրն Ս . կուտին ,
իր նախկին Յովակիմ անունն սկսաւ
միշտ գրութածել :

Ծնողաց փափագը լեցընելու համար՝
աղնուական եկեղեցականաց Ակադե-
միային մէջ մտաւ : Հռովմայ համալսա-
րանին մէջ կանսնական և քաղաքական

իրաւագիտութեան ընթացքն աւար-
տեց : Հոս ալ հասարակոց փիճարանու-
թեանց մէջ մտաւ շատ անգամ և յաղ-
թող հանդիսանալով մէկ անգամ 60 սո-
կոյ գումար մ'ընդունեցաւ ի պարզե ,
և ուրիշ անգամ ալ պսակն : Բայց այս-
չափ յաղթանակաց մէջ ալ բարի վա-
րուց հայելի մ'էր , և ամէնքը զերի-
տասարդ կսման ֆէշչի մատնանիշ կը
ցուցընէին յօրինակ առաքինութեանց :

Թէ քաղաքական և թէ կանոնական
իրաւագիտութեանց պսակն ընդունե-
լով , ֆէշչի մեծ համարում ստացաւ
յաշ բարձրագոյն անձանց , որք և ի-
մաստուն խորհրդովք կ'օգնէին իրեն , և
կը յուսային որ իր գործերով եկեղե-
ցւոյ ալ շատ օդապակար պիտի լինի : Այս
իրեն օգնող մեծամեծ անձանց մէջ ա-
ռաջին կը հանանք դասել զծիրանաւորն
Ռալի:

1831ին Գրիգոր ԺԶ յաղորդելով սա-
կաւատեն Պիոս Բ^թ , շուտ իմացաւ այս
երիտասարդ անձին յարգն : 1837ին
ներքին եպիսկոպոսաց (Prelato domes-
tico) թույն մէջ գասեց . և երր մարտի
16ին Ակադեմիային ելաւ՝ նոյն տա-
րուցն մէջ քահանայապեան զինքը Ստո-
րագրութեան (Segnatura) դատաստա-
նարանին առաջարկու անուանեց : Քիչ
վերջը մեծագոյն մասնական պաշտօն
մը յանձնեց :

Սուրբ Ստանիսլաւոսի մատրան մէջ
արդէն սրբազն ստորին աստիճաննե-
րըն ընդուներ էր , և քահանայութեան
կը պատրաստուէր . փոխանորդ ծիրա-
նաւորն Օսէպաքի , որ շատուց ՚ի վեր
կը փափագէր ծիրանին թողլով թիսու-
սեանց նորընճայարան մտնել , իր մատ-
րան մէջ 1837ին քահանայ ձեռնա-
զրեց զգէշչի , որ նոյն ատեն քսան և եօ-
թըն տարեկան էր իրաւցընէ մեծ բաղդ-
ունեցաւ այս ծիրանաւորս՝ առաջնոր-
դելով ՚ի սուրբ Սբելանն այնպիսի անձ
մը՝ որ քիչ վերջը քահանայապեա և
փոխանորդ պիտի լինի քրիստոսի :

Յարուճակելի

ԼԵՒՈՆ ԵՐԵՎԱՆԱԿԱՆ ԵՐՈՐԴ

ԵՒ

ԳԵՂԱՐՈՒԵՍՔ



իր որ այս մեծ քահանայաց պետն սաքը կը դնէ անդ կը թողու նաև իւր զարմանալի և մեծ հանճարյն հետքն և զրոշմը . ըսածնիս այսօրուան օրս ասլաց ցուցեալ գործ մի է , և զայս ոչ միայն չեն համարձակիր ժխտել լեւուն ժգէ ամենէն աւելի յայտնի հակառակորդներըն , այլ և ոչ իսկ կը տարակուսին :

Քաղաքականութիւնն և ճարտարութիւնն նոր կեանք և նորանոր և մասնական յատկութիւն ստացան իր գեղափայլ աստեղ լուսովն պայծաւացեալք : Թուրի թէ իր հզօր հայեացքն կը կենդանացընէ , կը նորոգէ , և պտղաբերեալ կարգասաւորէ . վասն զի ամենայն ինչ իր չորս կողմը շարժման մէջ է և ամէն բան գեղեցկանալու և նորոգութեան կը դիմէ : կենսաստու գեղեցիկ ծաղիկ մ'է , որ 'ի վատիկանայ այսօր յառաջ կու գայ . ազգաց և ազանց փափաքած դարուն գարուն է լեռն ժգի :

Ճառեց նա կրօնից վրայ , որ անպատիւ և ոտնակրիս եղեր էր , և զայն տպէտ և ախտասէր ուամկին աշաց առջն փայլ լեցուց , և մարդկային սրտին փափաքած խաղաղութեան նորանոր յոյսեր տուաւ : Խօսեցաւ զիտութեան վրայ դարու մը մէջ՝ որ նորահնար գիտութեամք լի է . և հաւատոց լուսովն լուսաւորելով զգիտութիւն , լուսոյ այնպիսի փայլուն ճառագայթներ արձրկեց՝ որ նոյն իսկ մարդկային բարձր հանճարները բռնագատուեցան խոստովնելու թէ իրենց մտաց աչքը խտղեցաւ : Ընկերական դրութեանց վրայ գրեց , և նոյն իսկ նըր բամտաց նոր հորիզոն մը բացաւ , ցուցը նեղով անոնց միանգամայն այն աղետափի առեղծուածին բանալին , որով բովանդակ ազգ մարդկան յուղման և

շփոթութեան մէջ է : Քաղաքականութեան վրայ իւր հանճարը տարածեց սփռեց , և զայն ալ յաւիտենական արդարութեան ընդարձակ և զեղեցիկ գաշտաց վրայ հանելու համար՝ անոր նոր կեանք մը տուաւ :

Ամենայն ինչ կերպարանափոխ եղաւ , ամենայն ինչ գեղեցկացաւ , և ամէն բան այս մեծ քահանայապետին ձեռաց տակ վերացաւ բարձրացաւ , որոյ իշխանութիւնն կարծես թէ երէկ սկսաւ , և ահա այսօր անմահական և հրաշալի վաստակոց շարք մը գիզեր է : Թուրի թէ միայն գեղարուեստք զրկեալ պիտի մնային լեւունի ժգի մեծ հանճարէն ծագած լուսէն ժամանակիս ձախող պատահարաց համար . բայց այս վախսալ շատ շտեց , վասն զի պատրանք մ'էր և ցնորբ : Լեւուն ժգի . թէ պէտ և շատ արգելք ունեցաւ , պաշարուեցաւ ունանց անյալզելի երեցող դժուարութեամբք , բայց նորա հանճարն չհանճուրեցից , չհամբերեց և չուզեց 'ի կապանս կաշկանդեալ մնալ . վասն զի հանճարն լցու մ'է , որ նոյն իսկ խաւարին և թանճարամած ամնոց մէջն ալ կը ջանայ ծագել , և ահա սոյնպէս նորա հանճարոյն ճառագայթքն որչափ արգելուեցան սյնչափ աւելի պայծառ երեսեցան : Եւ յիրաւի այս Մեծին լեւունի քահանայապետութեան տարիները եթէ լաւ մը քննենք , պիտի տեսնենք՝ որ անոնց իւրաքանչիւրն մէկ մէկ նշան է նորա գեղարուեստից վրայ ըրած յալը թանակին : Լեւունի ժգի բայլից ետեւէն երթալով՝ պիտի տեսնենք որ անոնց ամէն մէկ հետքը գեղարուեստից յառաջդիմութեան նշան են :

Թէ պէտ և լեւուն ժգի , վատիկանու պալատին մէջ փակուած է , և իւր ժամանակաւոր իշխանութեան միայն ան-

պտուղ դրօշն ունի, (մինչև իւր որդւոց ողորմութիւնը ընդունելու բանադաւաւեցա), բայց նա դիտէ սքանչելիս դործել, և քրիստոնէական սիրոյ ողորմութիւնն ուրա ձեռաց մէջ կ'առաւելու և կ'աճի գեղարուեստից պայժառութիւն և յառաջդիմութիւն չնորհելու համար, որոց Քահանայապետը մի մի ՄԵԿԵՆԱՍ ներեղան, և որոց համար խոսիս ամենայն ազգացթագուհի և ուստիցի եղաւ: Հոյ մենք Լեւոնի ժի՞ գեղարուեստից ասպարիդին մէջ ըրած մեծագործութեանց իրաքանչիւրը չենք ուղեր՝ ի թիւ արկանել, այլ միայն անոնց զիսաւոր ները՝ ի մէջ բերենք, որոց ամէնն ալ որ և ից իշխանի մը թագաւորութիւնը կրնայ պայժառացընել:

Լեւոն ժի՞ այն իր փակարանէն Ս. Թումայի երկասիրութեանց հրաշալի տպագրութիւնը հրատարակեց, որ ատպագրական արուեստի և ճարտարութեան գըլուխ գործոց է, և միանգամայն մշտնիւնաւոր յիշատակ՝ այն խորին զիտութեանց և իմաստութեանց, որով կը փայլի այս մեծայալթ Քահանայապետու, իւր նոր արգասարեր միտքն, դարուս արգասաւորութեան առջև մեծ ասպարէղ մի կը բանայ, Առտանսակաց Արահից (Sala dei Candelabri) հրաշալեօք, որ մարմարինի այլ և այլ սղագին տեսակաց, և բարակ բանուածոց համար աշխարհիս մեծատորդ սրահներէն է:

Բաց աստի Լեւոնի ջահին լուսովը կը պայժառանան, կը նորագուին և կը զօրանան նաև օրոցի և ձամկաց արուեստներն ալ, որք ի մասնաւորի հռովմէական Քահանայապետաց արգիւնք մ'են: Յիրաւի համկաց գործատաւնն (Lavoratorio dei Mosaici) թէ կը մեծցընէ և թէ կը գեղեցկացընէ, և զարուեստաւորս կը խրախուսէ և կը քաշալերէ, որք և նորա մեծանձն պաշտպանութեան տակ են:

Օթոցներու սրահիկ մ'ալ կը չինէ, և ցուցաններու սքանչելի խումբ մը կը ժողովէ հօն, ուստի նա այսու փարիզեան ճարտարութեան վրայ ալ ՚ի վատիկանէ լցոս մը կը ծագէ:

Լեւոն բաց յայտոցիկ կը ջանայ ամենայն ինչ գեղեցկացընել և կատարելաւ, գործել ուստի և զինքը շրջապատող մեծագործ վատիկանեան Գրատան վրայ ալ իւր փոյթը և խնամքը ցուցընելով զայն կը մեծցընէ շէնքով գրոց հատորներով ցուցակները ստուարացընելով և հին զարդուց վրայ թանկագին զարդեր յաւելով Ալիսարինագրական տախտակաց սրահն ևս նոր պայժառութիւն մի կը զգենու, անխոնջ Քահանայապետին սիրալիր խնամքը, օտարականաց ուշադրութիւնը և անոնց զարմանքը զրաւելով, որք ի հեռաւոր աշխահաց վատիկանու մոգական իմթաղեցութեամբ հրապարւեալ կը ձգուին՝ ի Հոռվմ:

Քահանայապետը մեծայաղթ և նշանաւոր արձանաց համար շատ նշանաւոր եղան, որովք ուղեցին զարդարել և գեղեցկացընել զՀոռվմ: Ուստի և Լեւոն ժի՞ թէպէտ չորս պատերումէջ Քահանաւու, սակայն այս մեծ գործն ևս մտածեց, և վատիկանեան պարտիզաց մէջ վատիկանու ժողովոյն յիշատակի արձանը կանգնեց, որ մարմարինաց հազորագիւտ և կիրթ ձեռաց գործ ըլլալուն համար փառաւոր է:

Քահանայապետիս հրաշալի վաստակ աւելի ևս կը յայտնուի, կը յառաջադիմէ և կը փայլի: Վատիկան պըզտիկ կու գայ իւր գործունէութեան, և ահա նա իւր փակարանին սահմաններէն ալ հանճարովն դուրս թռչելով Ս. Յովինէս Լատերանու շրջանակը կը լմիցընէ, որ Քրիստոնէական ճարտարապետութեան հրայալի զուսն գործոց մի է: Մանդովանիի հրաման կու տայ որ իւր ճարտար և հոչակաւոր վրձինովն պայժառացընէ Ս. Դամասոսի գտաւիթը: Ս. Թովմայի Պարիոնի Եկեղեցւոյն նոր կեանք մը կու տայ, որ մը զիտէ թէ որչափ ժամանակ գոյց պիտի մնար՝ եթէ Պապին առատաճեռնութիւնն ըլլար: Նյոնպէտ Արտիկն Յիսուսի նուիրեալ տաճարին համար գանձեր կը սպառէ: Այսպէս Մեթուլեան ճամբոն վրայ եղած Ս. Ոնտոնի հոյակապ Եկեղեցին,


թէսթաշչից ըսուած թաղին հրաշալի տաճարն, որոյ համար միլիոնի շափ ծախը ըրաւ Պապն, ասոնք ամէնքն ալ Լեռնի ժկ' պէտք է 'ի սրտէ շնորհակալ ըլլան:

Այս գործոնէովթեանց վրայ կը յաւելու ոյժմ' նոր մօ' ալ, որով Լեռնի ժկ' օրջնիեալ անունը լուսաւոր և պայծառ պիտի հասնի մինչեւ ի յետինս. այս գործն է փէշչի տան մատուան, յորում մեծ Քահանայապետին մօրը ոսկերքն դրուած են, մատուռ մի՛ որ Փրետերիկոս Մանուչչեայ ճարտարապետական ճարտար ձեռքով կանգնուած է. յաւելունք ասոնց վրայ նաև 'ի ֆօնդանայէ շինուած Քարփինէթոյի եկեղեցին, Անանի ապատանարանը, և այն անթիւ անհամար չէնքերը և վաստակները, զորս գրի-

շըս չի բաւեր աստ թուելու մի առ մի՛ Այս ամենայն իրաւոցնէ դրեթէ կը ստիպեն զմեզ խոստովանելու թէ գովեստք և գրուատիք ոչինչ են լեռնի ժկ' արդեանց բաղդատութեամբ:

Մեծ արդարեւ ապացոյց և ընծայութիւն են լեռն գրացն ժկ' սրտին մէջ վառեալ և բորբոքեալ սիրոյն առ արուեստոն նաև Փինցայի պարտիզին մէջ վատիկանեան աշխարհականդիսին ներկայացման համար կառուցեալ շինուածքն:

Կրնանք զլեւոն ժկ' հաւաստեաւ կոչեառիծ մը՝ որ գրականութեան խան, գարմանց և աւերմանց ապականիշ տարեց գէմ ահեղ մարտ մը զնելով մերձ է բոլորովին յաղթանակելու Գիտութեան և Արուեստից ասպարիզին վրայ. Ուիւծն անուամբ և Արծիւն հանճարով:



ՏԱՃԱՐ Ս. ՊԵՏՐՈՍԻ Ի ՀՈՎՎԱԾ

Սուրբ Պետրոս.... Հոռվմ հասնող ամէն ճանապարհորդ մէկէն քայլերը 'ի Ս. Պետրոս կ'ուղղէ: Ս. Պետրոս.... ուրախովթեամբ կը կրկնեն բազմութիւն Հռովմացեցւոց՝ մեծ հանդիսից օրեր ի Ս. Պետրոս կ'ընթանայ թէ ուղղափառն և թէ անդպիսականն, պուտայեանն ու հերձուածողն, անաստուածըն ու հաւատացեալն: Միութեան կէտէ, ընդհանուր ձգողութեան կեղրոնն է. Հոն փառաւոր կամարաց տակ քաղաքական ու իշխանական վէճը կը դադրին, ամենայն ոք կը յափշտակութ 'ի

զուարթ գաշտ գեղեցին, և նոր կենաւանութիւն կը զգենու. վասն զի անդ 'ի հիացման՝ խոհուն միտքն քան զմեր նուաստ աշխարհին միմնորդուն լաւագոյն նոր միմնորդ մը կը կազմէ:

Հոն իտալական հանճարն աստիճանաւ զարգացյաւ ու մերձեցաւ կատարե. լութեան, մինչ մեծագործ Մայր եկեղեցին ընդարձակելով, տակաւ տակաւ կը չնչէր կալիգոլայի կրկիսին ու Ներոննեան պարտիզաց անգործութեան յիշատակը՝ որոց վրայ հիմնեալ էր. Մէկ կողմէն քրիստոնէական քաղաքակա-

Նութիւնն կը յաղթանակէր խաւարա-
մած հեթանոսութեան, միւս կողմէն
ընտրելագոյն ոնն կը գերազանցէր քան
զզարդարուն ու զիսել ոճը։ Հանդի-
պահայեաց նկարութիւնն և երկը համ-
արիւն արհեստք ա'լ ևս չունեցան մի-
ջին դարուն երկայն գծերը, ցամաք ձեւե-
րը ու անկիւնաւոր ծալւածները։ այլ
հուսկ ուրեմն գտան զցանկալի պար-
զութիւն, յորում է ճշմարտին օրինա-
կըն, բաժանմամբ, կարգաւորութեամբ
ու շափակցութեամբ մասանց։ Բայց
դժուարաւ այսն մեծամեծ արուեստա-
գէտք պատի ունենային զներշնչութիւն,
եթէ 'ի կրօնի ու 'ի պաշտաման հզօր
շարժող առիթ մը չունենային։ Քաղա-
քականութիւնն տաճարց սեմոց վրայ
ծնաւ. պայս կը վկայեն չելուազին, Դիտ-
պօլիս, չերմողօլիս և ուրիշ ամենահին
քաղաքներ ։ Շաթոպրիան կ'ըսէ և Քրիս-
տոնէութիւնն եկաւ ճարտարապետու-
թեան ու արուեստից մէջ ճշմարիտ հա-
մեմատութիւններ հաստատելու։

«Նայցէք մեծամեծ փարժապետաց
այս գործերը, կը գոչէր հիացմամբ հը-
մուտ բողոքական մը, տեսէք Սրբոց այս
պատկերները, (ու Վատիկանու Մայր
Եկեղեցւոյն վրայ կը խօսէր), և անհնար
է որ ձեր սիրտն հոգեոր չնորհօք չգո-
րովի։»

Տէ Սդահու տիկինն Ս. Պետրոսի վր-
այ առանձինն այսպէս կը գրէր. «Այս
տաճարն նոյն ինքնին անշափութեան
պատկեր մի է։»

Բայց պատմական յիշատակութեանց
պէտք չունինք. նիւթելնիս չի ներեր։
բաց աստի թնչ նպատակաւ այլոց տը-
պաւորութիւնները խնդրել ապացուցա-
նելու համար զայն՝ զոր տրքէն աչք կը
տեսնեն, սիրտն կը գդայ ու միտքն կ'ըմ-
բռնէ։ Վատիկանեան Մայր Եկեղեցին
նախ փոքրիկ եկեղեցի մի էր, զոր Անա-
կիտոս Պապն 'ի պատիւ և 'ի շնորհա-
կալութիւն Սրբոյն Պետրոսի յինեց, ա-
ռաջին պաշտպան ունեցաւ զկոսան-
դին, որ Մաքսիմանոսի վրայը ըրած յաղ-
թանակէն յետոյ քաղաքը գառնալով
տեսաւ այս ցածուն աղօթարանը, և որու-

չեց աւելի մեծ ու աւելի գեղեցիկ տա-
ճարի մը փոխել։

Արդ ինչպէս սոյնպիսի ամենայն չէն-
քեր, որ իտալից և մանաւանդ Հոռովմայ
մէջ չինուեցան՝ հալածանաց գաղար-
ման ժամանակ ու կոստանդիտանախ շը-
նորհած խաղաղութենն է յետոյ, անարդ
եղանակաւ բարձրացան, այսպէս և
այս եկեղեցին Քանդեալ յինուածոց ան-
բաւնիւթերը կը գործածուէին, սիւնք,
խորաքանդակք, սիւնազուիք և իւա-
րիսիք, և այնչափ փութով աճապարե-
ցին՝ որ այլ և այլ մասունքը միացուցած
ատեն թողուցին սրբոյ մը պատկերին
քով 'ի պատիւ Ներոնի բատին մակա-
գրութիւն մը, ու Քրիստոսի խային
խարսին վրայ 'ի յիշատակ Ազգիպ-
պայ յունարէն մակագրութիւն մը։

Բայց թողունք Մայր Եկեղեցւոյս ժա-
մանակագրական պատմութիւնը Նիկո-
լոս Ե Քահանայապետէն (1447-1455)՝
մինչև Պիոս Թ (1458-1471) քառասուն
քահանայապետք խնամքը ըրին հրաշալի
տաճարիս ընդարձակութեան ու գեղեց-
կութեան. իխտա գէշ վիճակի մէջ զիին
զայն քահանայապետական աթոռոյն
փոխադրութիւնն ու հերձուածն՝ Նիկո-
լոս Ե ժամանակակից երկու զիխաւոր ա-
րեստագիտաց թօգելլինոյի ու Ալբերտի
հետ ամենայն խնամք տարաւ նորոգու-
թեանը. իսկ Յուլիոս Բի (1503-1513)
հետ կ'երեւնան միանգամայն Միկելան-
ջելո ու Բրամանդ, յորս վէճք, խառնա-
կութիւն և սրաակութութիւն ծագեցան
պատերազմանէր ճարտարարուեստաքա-
հանայապետին լայնածաւալ խորհը-
րոց գործադրութիւնը խափանելու հա-
մար. Միկելանջելո յափթանակեց, և
1506ին ապրիլի 18, շաբաթ օր, նոյն
քահանայապետն մեծ հանդիսով հաս-
տատեց Վերոնիկայի մեծ սեան հիման
քարը, որ այժմ գմբեթին չորս սիւնե-
րէն մին է։

Լիսն Ժ' հետ (1513-1521) փայլե-
ցան այլ երկու մեծանուն անձինք, Պե-
րուցին և Սանցիֆ. իսկ կղեմէսն է (1522-
1534) և Պօլոս Երրորդի (1534-1549)՝
ժամանակ Անտոն Տա Ման Կալլո, Յու-

իլոս Հառվիմայեցի, Ալանսովինո և այլք. Բայց Մովսեսի հեղինակին հանճարն միշտ կենդանի է... Պօղոս Գէ ամենայն իշխանութիւն ընդունեցաւ ցանկալի գործ կատարելու համար և անու գործեց. «Եթէ յետս կենամ, կը գրէր, այս մեծ շինուածոյս կործանումն պիտի պատճառեմ, ու ինձի անչնչելի նախատինք ու աններելի յանցանք պիտի լինի»: Ամէն կողմանէ փառաւոր առաջարկը կը յանախէին առ ինքն. «Ոչ, կը սէր ամենուն, թողուցէք սկսած գործս կատարեմ»: — Դարձեալ երևելի անձննք մասն ունեցան մայր Եկեղեցւոյ շինութեան Ալբերգէն մինչև բրամնդ, թերուցցի ԵՄատերնօ, ու գրեթէ քսան ճարտարապետք, և ամէնքն ալ մեծահանճարք. բայց ոչ ոք կը ատարակուսիթէ զիխաւոր պարծանքն բոնարօղեայէ: Ինքնի մէջ բազմատեսակ խորհրդոց ու կարծեաց և անհամաձայնութեանց հաստատեց օրինակին կարգը, խնամատարութիւնն ու ամրութիւնը: Բրամնդ ունեցու մեծայաղթ գմբեթին առաջին զաղափարն, ու Միքելանջելօ զայնի գործ զնելու փառքն ունեցաւ, որը ըստ հաստարակաց հաւանութեան ուրիշ ճարտարապետ մը կարող պիտի յշինէր: Արդի Մայր Եկեղեցին քիչ մը երկայնածէ Մատաերնօ զիխաւոր թէ կեն կողմանէ, բայց ձեռոյն դաղափարն բոնարօղեայէ:

Սակայն ճակատին շքեղութիւնն թե բրի ու անկատար երեցաւ. Հարկ էր հը-րապարակն արժանաւոր չէնքերով շըր-ջապատել ու գեղիցկացընել. այսպիսի կարեոր ու մեծ գործոյ մը ձեռք զար-կաւ Աղքեքսանդրի Ե (1655-1667), յան-ձնելով թերնինիի կողմնակի երկու կա-մարակաա գաւթից դժագին յօրինել.

կազմեալ են 284 թիվուեան սիւներէ,
հիմունքն զոպանեան, բուն զորացի
ու պսակն յոնիական քառակարգ թերա-
տաձև, երկու հիմնալի աղբիւներով,
որոց մին՝ Քահանայսապետին Պալատին
դիմացն է շինեալ յԱղեքսանդր ի. միւսն
յետոյ կը եմէս ժէ. մէջտեզն կոթողը
Քաւթին վերի կողմը կը պատէ սիւնա-
պարդ պսակ մը իննըսոյն ու մից արձա-

նգբ, կրօնաւորաց հիմնդրից և այլ ու-
րիշ սրբոց: Եղիպատական կողմողն կը
բարձրանայ ի միջի, որ և պատմական
յիշատակ մ'է երկու մեծ զօրութեանց,
երկու հեթանոս մեծազօր քաղաքակա-
նութեան, որոց վրայ փայլեցաւ խաչն,
երկուբին ալ յաղճելով:

բերնինի մեծ պատիւ ընդունեցաւ
այս երկու շքեղ միանգամայն պարզ
գաւթից շինութեամբ։ Լուդովիկոս ԺԴ
Գաղղից հրաշք անուանեց զանոնք, և
Քահանայապետին գրեց որ հեղինակը
Փարիզ զրկէ Թիւլլրիի գաւթից շինու-
թիւննիրեն յանձնելու համար.... Բայց
մեծ հրապարակին գեղեցկավայել աշ-
խատութիւնն չէր անթերի, կը պակսէր
մէջտեղի կոթողն. վերջապէս մերձա-
ւոր աւանդատունէն բերին զայն, 1586
տպրիի 30 ին, Անգլանու է. Քահանա.
յապետին անզրդուելի հրամանաւ. Նոյն
արաւոյն սեպտեմբերի 10 ին արեգակն
կը մոնէր, երբ՝ յետ յիսուներկու ան-
գամ ունայն վաստակոց՝ բարձրացու-
ցին իւր խարսխին վրայ։ Գործոյն վա-
րիչն էր Գորմինիկոս Յոնդանա, որ ՚ի
վարձ ընդունեցաւ հռովմէական ազնը-
ւականութեան կարգը, ասպետի պա-
տուանունը, 2000 սկուտ եկամուտ, որ
և ժառանգաց պիտի անցնէր, և գործա-
ծուած ամէն նիւթերը. այսու հանդերձ
առանց Գուլիէլմոս բերեսկայի ճայնին
կամքաջասրտութեան, որ մահստիպ լր-
ուութեան մէջ գոչեց շցորդ պարտանաց,
զինի մարդկանց և, թերես այսօր այս
կոթողը խարսխիս վրայ անարատ պիտի
չդանուէր, որ դեռ ևս շատ գարուց ան-
ցաւ որութեան առնէն. կրնայ տեսել:

Արդ հոս շքեղազարդ և փառաւոր
տաճարիս սեմին վրայ գադար առնունք.
ընթերցուն լաւ կը ճանչնայ արուեստա-
կան հարսուութիւնս՝ որք առատապէս
կը գանուին՝ այս ամենընդարձակ տաճա-
րիս մէջ, որ աշխարհիս ամենէն աւելի
երկայն ու լայն շէնքն է. ուստի և ար-
դարապէս կը պարծիմք՝ որ այսպիսի
հրաշալի շնչկի մէջ կը պատրաստուին
լեռն ժգ սրբազն Քահանայապետին
յիսնաթեալ Քահանայապետին Յորելենի

կատարման հանդէսք : Եւ անհնար է աւ-
միի յարմար և պատշաճական տեղ մը
գտնել արուեստական պարզեց Աշ-
խարհահանդիսիս , զորս կ'ընծայեն գե-
ղեցիկ արուեստից Մեկենասին , որ մեր-

ձաւոր պալատան մէջ կը բնակի : Զէ հը-
նար դարձեալ ուրիշ տեղ մը գտնել որ
լաւ ես յարմարի այս պարզեց խոր-
հըրդական իմաստին , որ աշխարհիս ա-
մէն կողմէն կը դրկուին :

ԹԱՆԿՈՂԻՆ ԵՒ ԱԶՆԻՒ ԸՆԾԱՑՔ

ԱՌ Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ ՀԴՈՎՄԱՅ

Վատիկանու աշխարհանանդիսին
կարդադիչ Մասնաժողովով նորի-
րան արուեստական խորանն և ար-
ձարեայ կանքեղն :

Մասնաժողովոյս ամէն անդամք կը
փափագէին յիշատակաց արժանի նը-
ւը մ'ընել Սրբազնն Հօր :

Արդ , որպէս զի սա արժանաւոր ըլ-
լայ՝ վորձով հասարակաց մրցումն բա-
ցաւ խորանի մը շինութեան համար ,
որոյ վրայ պիտի մատուցանէր Քահա-
նայապետն իր յիմներորդ տարեգար-
ձին հոչակաւոր օրուան Պատարագը :
Այս խորանն գոթա - իտալական ճար-
տարապետութեամբ շինուեր է : Բովան-
դակ խորանն կազմուած է ամենանուրբ
քանդակեալ և փորագրեալ փոյտէ , ոս-
կեզօծեալ և կիտանկարեալ :

Դարձեալ , սոյն այս Մասնաժողովով՝
ամէն աշխարհի հաւատացեալներէն
թինչե տասն հարիւրեակ փոքր դրա-
մոց գումարներ հաւաքելով՝ ազնուա-
կան մտածութեամբ սրոշեց՝ արծա-
թեայ կանթեալ մընուիրել , որ և մշտըն-
չենապէս պիտի վասի Ա . Գետրոսի Ա-
ռաքելոց իշխանին գերեզմանին առջև :

Մոտէնա և նոնաներոյա քաղաքաց
ժողովրդեան և կղերին ընծայաճ փա-
ռաշոր սկինն :

Վերոյիշեալ քաղաքաց կղերն և ազ-
նուականութիւնը ժողով մի գումարե-
լով որոշեցին որ իրենք ալ իրենց կող-

մանէ Քահանայապետին Սկիհ մը նուի-
րեն : Արդ այս սկիհն բոլոր ոսկի է ըն-
դելուզեալ ակամիք և մարդարագք . իր
ձեն և ոճն՝ համաձայն է այն փառաւոր
խորանին զոր նուիրեց Մասնաժողովն ,
և որդյ մասն պիտի կազմէ : իր գեղեցիկ
ծրագիրը Վենետիկեցի երիտասարդ և
հոչակաւոր Բաթայէլ Քաթանեօյին
է : Իսր մեծութիւնն բթաշափէ քիչ
մ'աւելի է : Գեղեցկազոյն կտորը՝ ուռն
կամ խարիսխն է , զոր և ոսկեգործն
շատ բարակ զրուագեր յղկեր է : Բաֆա-
կըն ամենազուր ոսկի է , կոնաձեւ է և
ամբողջ մարմարն հետ միանալու հէտն՝
որ է բաժակին ստորին մասն՝ գեղեցիկ և
ամենաբնական տերեւովք զարդարեալ
է : Ամբողջ սկիհւյոյն վրայ վառ վառ կը շա-
զան այլ և այլ մեծութեամբ զմրուխտը,
ագամանդք և կարկեհանք :

Նուէրք Գաղղիական Հասարակա-
պետութեան նախագահին :

Գաղղիա՝ որ միշտ ինքինքն իրաւամբ
համարեր է Անդրանիկ Որդի եկեղեցւոյ ,
այս հանդիսաւոր առթիս մէջ ալ իր
զիկաւորին ձեռագ ցըցուց թէ ոչ նը-
ւազ կերպով մասնակից է բովանդակ
աշխարհի ուրախութեան :

Արդ այս ազնուական ազգին ներկա-
յացուցին՝ Նախագահին զրկած փա-
ռաշոր ընծաները ներկայացուց Ա . Քա-
հանայապետին :

Եւ այս իրաւցընէ արքայավոյել ըն-
ծաներն՝ են նշանաւոր մեծութեամբ

Սէվուի յախճապակէ ամսօթ մը, և նոյն նիւթէն մեծ թանգարաման մը:

Աւելորդ է հոս ըստել՝ որ Գաղղիացիք այս արուեստին մէջ յառաջադէմ գուշվ քան զբովանդակ Եւրոպա իրենց գործատուններէն և մասնաւորապէս Սէվուի գործատուննէն ելած յախճապակեայ անօթք և զարգուց առարկայք՝ կը մրցին նոյն իսկ չինացի և ճարոնացի անօթոց հետ, և բազում մասամբ իսկ կը գերազանցեն զայն: Այս ձինազգիւս գործոց առաջնորդն է հուշակարգ կամ արուեստագէտն է հուչակաւորն Պ. Պրէ: Անօթք 1, 50 մէդր բարձրութիւն ունի, բովանդակ սպիտակ ենթակայի վրայ՝ նկարեր է պտղալից որթոց ճիւղ մը բընական գոյներով:

Նոյնպէս թանգարամանին ալ մէջտեղ՝ կը բարձրանայ Արէսի արձանն և արուեստագրն ամենամեծ ճիկն թափեր է զգեստին գունոց նմանողութեան և կերպարանքին և անդամոց արագութեան և յունական բարեձեռութեան նկատմամբ:

Օգոստափառ Սուլդանին նորիրաժՄատանին:

Այս մատանին, ինչպէս ամենայն ոք գիտէ՝ ներկայացընելու պատիւը՝ աղնուական մոտածութեամբ մը վեհափառինքնակալը չնորհեց գերերջանիկ կաթորիկոսին Հասովմէական Հայոց:

Միակտուր զրու և մեծ տկունքէ մը կը բարձրանայ, ձևել զրեթէ հաւակիթաձև և մեծ ճարտարութեամբ բանուած. եղեղն ամբողջ զուտ ոսկի է: Այս ակունքն շատ հին և պատմական լինելով շատ սիրելի էր Օգոստափառ Սուլդանին ինչպէս ինքն իսկ յայտնեց զայն յանձնած ժամանակ գերերջ. Ազարեան կաթուղիկոսին:

Փապական Ռիրար

Ընհայ Գերապատից Տեառն կիլիկիոյ Փատրիարքին

Ամենայն ոք գիտէ թէ ասլնեգործու-

թեան արուեստին մէջ արևելեան ազգք շատ ճարտար են. այնպէս որ նրբահիւս և հրաշագեղ ասղնեգործութիւն մը նըշանակելու համար սովորաբար տաճկական կամ պարսկական ասղնեգործութիւն կ'ըսենք:

Արևելք այս կանացի արուեստոն 'ի նախնի ժամանակաց կար. և ահա ասրդնեգործութեան հրաշալի նոր գործ մը, որ Սամանեան կայսրութեան մոյրաքաղաքին մէջ կատարուեցաւ քրիստոնեայ կուսանաց հրեշտակային ձեռներով, որք վառեալ սիրով Անարատ թղութեան Հայ կուսանաց նշանադրոշ. մը կը կրեն, զոր հաստատեց Հասուն ծիրանաւորն քառասուն և հինգ տարի առաջ 'ի կոստանդնուպօլիս: Այս կուսանք աղջկանց կրթութեան և հրահանգութեան կը զրագին, մանաւանդ աղջկատաց և նորագարձից: Շատ տուներունին հայ Պատրիարքութեան ընդգարձակ թեմին մէջ թէ կրօնից և թէ քաղաքակրթութեան մեծամեծ բարիք ընելով: Լաւ ասղնեգործութիւնն իրենց միայն սեպհական փառք է, որով թէ յԱրևելս և թէ յԱրևմուս զարմանալի են: Արդ ամենայն տեղեաց այս արուեստիս հմտուաք, մանաւանդ կանայք, շատ և շատ պիտի հիմանան Վատիկանու. Հանգիսին մէջ հայ կուսանաց անժխտելի ճարտարութեան հիմանալի ապացուցիս վրայ:

Այս Յւրաբիս մէջ թիթեղանման և լարանման ոսկին ճարտարութեամբ և ստուգիւ արևելեան ճոխութեամբ սրբուած են. բայց այս յարգի մետաղին փայլէն և պայծառութենէն ացըը հանգշեցնելու համար՝ այսպիսի մեծ գործոց մը աշխատողն՝ իւր սրբամտութեամբ վայելչապէս և նորօրինակ ճարտարութեամբ յարմարցուցեր է զեղեցկահիւս որթոց ուռեր, վարգեր և ազնիւ ծաղիկներ մետաքսէ և ոսկիէ հիւսուած, գրեթէ մի և նոյն թել կաղմելով, ուստի և մետաղեայ հաճոյական անդրագարձութիւններ առաջ կը բերեն վարգի, մանիշակի, յարգի և կանաչ գոյներով որ արծաթեայ երփնագոյն ենթակային

Վրայ կը գերազանցէ քան զլաւագոյն սատափ, պահելով միանդամայն գեղեցիկ դիմահարութիւն մը: Վերի կողմը դրւած են աղքատումին կնիքն և քահանայապետական նշանքն և նրբահիւս ամենայն մասամբ գունոց կենդանութեամբն դուրս կը ցատկեն: Վահանին միջոցն երկնադոյն կապուտակ է, իսկ նոճին՝ կատարեալ կերպով գալարւոյն ման է: Իսկ ստորին կողմն յունական խաչերն լաւ յարմարած են դիմահար և միջնագոյն ոսկոյ ճարտար խանը: Մամբ: Իսկ նոյայ ջապանն որ կը հանգչի Արարատ լերան վրայ, ստորին կողմըն կը լեցընէ երկու կողմանց մէջ ալ և խորհրդաւոր նշանակութիւն մ'ունի. Երան երկու կողմանց դոյնն կարելի չէ զանազանել թէ արգեօք ոսկեզօծ:

մետաքսէ է թէ գոյնզգոյն ոսկիէ . թեթև է և թափանցիկ, նման Ալպեանց շղթայից գունոց՝ պայծառ օրերու մէջ:

Այսու հանդերձ ասղնեղործութեանը առա առատ և խիտ ձևերն, փայլուն պայծառութիւնն, աղեղանց յանող դարձուածն և արուեստական գեղեցիկ ըդգացումն ամենէն աւելի քեզ և մեծազօր և անհասանելի փառքը կը յօրինեն այն հայ քաջ կուսանաց, թողլովի բացուրիշ երկելի մասունքը:

Ուրարն վերին կողմանէ ոսկիէ լարով կապուած է, ոսկիէ փունջով վերջացած, ստորին ծայրից ծոպերուն նըման. որոց հակառակ կողմն սպիտակ պաստառով պատած է, աջ կողմն լատին և ի ձախն հայերէն լեզուով, հետեւալ նուիրթումնս ասղնեղործեալ է.

LEONI XIII

PONTIFICI MAXIMO

QUINQUAGESIMUM ANNUM

AB INITIO SACERDOTIO AGENTI

STEPHANUS PETRUS X AZARIAN

PATRIARCHA CILICIENSIS

TESTIMONIUM AMORIS

FIDELITATIS GRATIQUE ANIMI GENTIS CATHOLICÆ ARMENORUM

ZONAM ARTEFICIO NATIONALI

SERICO AUROQUE CONTEXTAM

DONO MITTIT

CONSTANTINOPOLI A. D. MDCCCLXXXVII.

Արդ այս մակագիրս համառօսիւ կամփոփէ ազնուական և փամմ գալափարն ընծայաբեր գերերջանիկ Պատրիարքին:

Սպանիոյ թագուհոյն նուիրած հովուական Մատանին:

Այս մատանիս ալ շատ գեղեցիկ է, բայց վերօյշելցյն յարգը չունի: Ագամանդակապ գեղեցիկ շափիւղայ մը կը փայլիի կերպոնը, իսկ շրջապատին կողմնակի երկու եղերն ալ զարգարեալ է փոքրագոյն աղամանդօք: Այս

ակրնիքու բանուածն ալ շատ աղէկ յաղողեր է. իսկ ադամնակաց զետեղման կարգն նոյն իսկ ինքն թագուհին պատուիրեր է:

Գերմանիոյ կայսեր նուիրած պապական Միքրոն:

Թէպէտ Հռովմայ քահանայապետք այլ և այլ ժամանակներ աղնիւ և թանկագին միթրեր ընդունեցան յիշանաւոր անձանց, բայց գերմանիոյ կայսեր նուիրածն կրնանք ըսել որ կը գերազանցէ քան զայլս իր նօխութեամբ:

Արդ ամբողջ Միթրը բանուած է ոսկե-
թելով սպիտակ ենթակայի վրայ: Եր-
կու երեսաց վրայ եօթանասուներկու
գեղեցիկ և այլ և այլ մեծութեամբ գո-
հարներ կը գտնուին. որոց մէջ դուրս
կը ցայտքեն թէ մեծութեամբ և թէ ա-
մենագեղեցիկ փայլով՝ երկու կարկե-
հան, երկու զմրուխտ, և երկու շափիւ-
ղայր : իսկ տասաւերկու հատ ալ ամենա-
գեղեցիկ և բաւական մեծութեամբ ա-
ղամանդներ: Այս միթրն պիտի կրէ Քա-
հանայապետն յորելենի պատարազը
մատուցած ժամանակ:

Կարմեղական կրօնաւորաց և սրի-
րահ Քահանաւայս եռական խաչը :

Ինչպէս ամէն կրօնաւորական կարգը
և Հաստատութիւնք, այսպէս ալ նաև
կարմեղականք՝ որոց պաշտպանն է
նոյն իսկ բարձրաստիճան ծիրանաւորն
Արքաթվինո, որ և է նախազահ պա-
տուց Աշխարհահանդիխին Մասնաժո-
ղովյն, Քահանայապետին յորելեանն
յարմար առիթ առին՝ յայտնելու ար-
տաքսապէս հասարակաց Հօրը իրենց
յարգանքն և սէրն:

Արդ այս արծաթեայ ոսկեզօծեալ
խաչը գրեթէ երկուք ու կէս մէղը բար-
ձրութիւն անի . շատ գեղեցիկ քանդա-
կեալ է, և տեղ տեղ արծաթեայ քան-
դակը՝ կընդհատին գեղեցիկ գոնազմի
կտորներէ, շրջապատեալ արուեստա-
կան կարկեհանգ:

Անկուռաճոյք Պրիհրսէլի: Նուէր Շամ
փոռնի Նախախնամուրեան Քեր:

Պեճիոյ հարուստ երկրէն եկած ան-
թիւ ընծաներուն մէջ յիշատակութեան
արժանի է այս գեղեցիկ անկուածոյքն:
Յուղարկողը փափագեր են որ ասկից
շապիկ մը շինուի յատկապէս Քահա-
նայապետին գործածութեան համար:

Զինական արկդ. Նուէր Շանկ-Հա-
յի Անարատ Յուրեկան Ծնկերուրեան:

Սոյն ընկերութիւնն Քահանայապէ-
տին Յորելինին առթիւ դրկեց առ նա
յարգանաց և սիրոյ թուղթ մը, ծրաբե-
լով զայն այս գեղեցիկ տփոյն մէջ: Այս
տուփը ամբողջ բանուած երենոսէ է,
զըր Զինացիք Ու- Մո կը կոչն:

Արուեստական Ցետրոց և Գրակալ.
Նուէր Սկուիլլա բերրին խմբագրին:

Ընդդէմ ազատամիտ լրագրաց դը-
ժոխայուր հայհոյութեանց, այս խմբա-
գրութիւնս նուիրեց Ս. Քահանայապէ-
տին 420, 000 անձանց ստորագրու-
թեամբ բաղկացեալ փառաւոր տետրոց
մը, փայտեայ գրակալի վրայ զետե-
ղելով: Այս գրակալս կը հանգչի քան-
դակեալ հրեշտակի մը վրայ . իսկ տե-
տրոցին կազմը շատ գերազանց է: Բո-
վանդակ փլազմի ոսկեզօծեալ պղըն-
ձէ կազմեալ է:

(L'Esposizione Vaticana)

Շարունակելի

